

Չարց

Ի՞նչ է արգելվում գազի համակարգի անվտանգության ապահովման համար գազասպառման համակարգի հավաքակցման և օգտագործման ընթացքում:

Պատասխան

Գազասպառման համակարգի հավաքակցման և օգտագործման ընթացքում արգելվում է՝

1.Կատարել գազաթողարկման կատարողական-տեխնիկական փաստաթղթերին և նախագծին չհամապատասխանող միացումներ և փոփոխություններ.

2.Գազը սպառել գազասպառման համակարգի անսարքության դեպքում.

3.Գազը սպառել հաշվառքի սարքի շրջանցմամբ.

4.Խախտել գազատարների և գազասարքավորումների պահպանման գոտիները.

5.Ինքնակամ միացումներ կատարել գազամատակարարման ցանցին, գազն օգտագործել գազօգտագործող սարքավորման տեխնիկական փաստաթղթով (անձնագրով) չնախատեսված նպատակներով: